2024-2025 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

11 – 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Տևողությունը՝ **90** րոպե:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **1992 թվականին զինաթափման ժողովի ընթացքում քիմիական զենքի կիրառման հետ միաժամանակ ինչը՞ արգելվեց:**
   1.Արտադրության նախապատրաստումը
   2. Արտադրությունը
   3. Կիրառման նախապատրաստումը
   4. Կիրառման թույլտվությունը

2. **Բոլշևեկյան ո՞րերրորդ բրիգադը ոչնչացրեցին հայկական ուժերը՝ 1920 թվականի սեպտեմբերի 1-ին Զևայի ճակատամարտում:**
   1. 81-րդ 2. 84-րդ
   3. 89-րդ 4. 86-րդ

3. **Համապատասխանացնել սահմանումները տրված հասկացություններին**

ա) Միջազգային զինված ընդհարման մեջ գտնվող երկրի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք	1.Ռազմագերիներ են
բ) Անձնական օգուտ քաղելու նպատակով հատուկ հավաքված և մարտական գործողություններին անմիջականորեն մասնակցող անձինք.	2.վարձկաններն են
գ) Կոմբատանտները, որոնք ընկել են հակառակորդի իշխանության տակ.	3.կոմբատանտներն են
դ) Անձինք, որոնք գործում են գաղտնի կամ խաբեության ճանապարհով, հավաքում են տեղեկություններ կողմերից մեկի հսկած տարածքում՝ հետագայում հակառակ կողմին փոխանցելու համար.	4.Լրտեսներն են

   1. ա-4 . բ-1. գ-3. դ-2
   2. ա-1. բ-3. գ-2. դ-4
   3. ա-2 . բ-4. գ-3. դ-1
   4. ա-3. բ-2. գ-1. դ-4

4. **Առավելապես ինչի՞ց է կախված դիտարկման արդյունքերի հավաստիությունը:**
   1. Խրամատի ճիշտ ընտրությունից
   2. Դիտակետի սարքավորումից
   3. Տեղի ճիշտ ընտրությունից և նրա սարքավորումից
   4. Դիտարկվող տարածքի ճիշտ ընտրությունից

5. Մարդկային զանգվածների վարքագծի փոփոխության նպատակով պատերազմի ինչպիսի՞ նոր տեսակ է դրվել շրջանառության մեջ:

1. «Սառը պատերազմ» 2. «Տեղեկատվական պատերազմ»
3. «Ահաբեկչական պատերազմ» 4. «Հոգեբանական պատերազմ»

6. Համապատասխանացնել 1992թ. օգոստոսի 14-ին ԼՂՀ-ում ստեղծված պաշտպանական շրջանները հրամանատարներին:

ա)Վիտալի Բալասանյան	1. Ասկերանի պաշտպանական շրջան
բ) Վաչագան Իշխանյան	2. Մարտակերտի պաշտպանական շրջան
գ) Նորայր Դանիելյան	3. Շուշիի պաշտպանական շրջան
դ) Մոնթե Մելքոնյան	4. Մարտունու պաշտպանական շրջան

1. ա-2, բ- 3, գ- 1, դ-4
2. ա-2, բ-4, գ-3, դ-1
3. ա-1, բ-3, գ-2, դ-4
4. ա-4, բ-3, գ-1, դ-2

7. Հրաձգության բոլոր դեպքերում հրաման տալու և հրաձգությանը պատրաստ լինելու համար պահանջվում է 3-4 վրկ: Այդ ընթացքում ինքնաթիռը քանի՞ մետր է անցնում:

1. 400-600 մ 2. 500-600 մ
3. 600-700 մ 4. 400-700 մ

8. Որքա՞ն պետք է լինի գնդակի կինետիկ էներգիան, որպեսզի կարողանա շարքից հանել մարդուկենսական օրգանները:

1. 78.5 Ջոուլից ոչ պակաս 2. 78 Ջոուլ
3. 62 Ջոուլ 4. 70 Ջոուլից ոչ պակաս

9. Որո՞նք են գիտակցության խանգարման տեսակները.

1.կորած գիտակցություն, մթագնած գիտակցություն, ուշաթափություն,
2.գիտակցության կորուստ, հիշողության կորուստ, կոմա,
3.գիտակցության կորուստ, հիշողության կորուստ, ուշաթափություն,
4.մթագնած գիտակցություն, ուշագնացություն, կոմա:

10. Մարդատար վագոնի երկարությունը 20մ. է: Որոշել նրա հեռավորությունը դիտորդից, եթե անկյունային մեծությունը հավասար է 5-ի:

1. 4 կմ 2. 4,5 կմ
3. 5 կմ 4. 6 կմ

11. Որոշել կայծակի հեռավորությունը դիտորդից, եթե որոտը լսվել է փայլատակումից՝ 3 վրկ հետո:

1. 400 մ 2. 990 մ
3. 550 մ 4. 700 մ

12. Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին աջ կողային է և չափավոր, իսկ նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա: Ինչպե՞ս պետք է վարել հրաձգությունը կալաշնիկովի 7,62 մմ ավտոմատով:

1. 3 թիրախ դեպի աջ: 2. 2 թիրախ դեպի աջ:
3. 2 թիրախ դեպի ձախ: 4. 3 թիրախ դեպի ձախ:

13. Մարդու հասակը 1,68 մ է: Որոշել նրա քայլի երկարությունը:

1. Ե = 0,8 մ
2. Ե = 0,82 մ
3. Ե = 0,75մ
4. Ե = 0,79 մ

14. Թվարկվածներից որտե՞ղ չի կարելի պահել ռազմագերիներին:

1. Վթարային շենքերում
2. Բանտային շենքերում
3. Ռազմական գործողությունների շրջանում գտնվող շենքերում
4. Սեյսմիկ գոտում գտնվող շենքերում

15. 1980 թ ընդունված կոնվենցիային կից ո՞ր արձանագրությամբ արգելվեց կամ սահմանափակվեց՝ չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրողական կիրառություն ունեցող զենքի որոշ տեսակների (հատկապես հրկիզող զենքի) գործարկումը:

1. Չորրորդ արձանագրությամբ
2. Երկրորդ արձանագրությամբ
3. Երրորդ արձանագրությամբ
4. Լրացուցիչ արձանագրությամբ

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Մինչև քանի՞ մետր է պահպանվում հարձակողական նռնակի բեկորների խոցելիությունը:

17. Ո՞րքան է ԿԱ 74 ինքնաձիգի սվին դանակի քաշը:

18. Զորանոցներում քանի՞ մ³ օդի հաշվարկով է կատարվում մահճակալների տեղաբաշխումը:

19. Քանի՞ կգ է կշռում ԴՇԿ խոշոր տրամաչափի գնդացիրը:

20. 1914թ. առաջին համաշխարհային պատերազմում Կովկասյան ճակատը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը: Քանի՞ կիլոմետր էր այդ ճակատը: